

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԷԼԽԱՆ ՄԵՅԹԻԵՎԻ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԹԻՎ

Թվում էր, թե անցան-գնացին այն դառն ու դժնդակ իրադարձությունն էրը, որոնց ականատես եղա Մեծ եղեռնի տարիներին: Դարեր շարունակ տառապած իմ ժողովուրդը վերջապես ապավինեց խոհրդային կարգերին, նրա հետ կապեց լավ օրերի հասնելու իր բաղձանքն էրը, տասնամյակներ շարունակ անդուլ ջանքեր գործադրեց, մեծ զոհ աբերությունների գնով (նաև մարդկային) լծվեց հայրենիքի վերաշինության սրբազան գործին: Արդյունքներով ուրախացանք, իսկ հիմա վշտացած նայում ենք, թե ինչպես են դրանք կործանվում... Եղեռնական սերնդին պատկանողներս ականատես դարձանք նույն վայրագ իրադարձություններին, որոնք տեղի ունեցան մի երկրում, որտեղ տասնամյակներ շարունակ իշխող կարգախոսը ժողովուրդների բարեկամությունն էր: Համոզվեցինք, որ այդ կարգախոսը սին էր, այդ պատճառով էլ բազմածավալ ճեղքեր տվեց: Ակամա հիշում են լուսահոգի մորս մարգարեական խոսքերը: Քաղաքագ եռու, բայց կյանքի դառնությունների բովով անցած մայրս ասաց. «Տղա Վարասթատ, դուք՝ կոմունիստներդ, էտա թուրք»-րի հ»տ պարեկամություն կխաղաք: Թուրքից պարեկամ կեղնի՞: Չեն հավատա, թուրքն իր խասայաթը չի փոխի...»: Սեփական կյանքով դառնացած, նա դատում էր համաձայն իր տեսածի ու ապրածի: Հարազատների կորստյան վիշտը մինչև խոր ծերություն մխաց նրա սրտում: Քանի՞-քանի՞ անգամ նա լալագին պատմել է, թե ինչպես Վանի 1896թ. դեպքերի ժամանակ թուրք խուժանները խուժել են իրենց տուն, կանանց ու երեխաների աչքերի առաջ կացնաճարել են իր հոր և երկու հորեղբայրների գանգերը, ուղեղները շաղ տվել գետնին, կյանքից զրկել Սեմերջոնց տոհմի երեք տղամարդկանց: Այդ լսելով, թեև իմ սիրտն էլ էր դառնանում, բայց իրեն վստահեցնում էի, որ մեր ժամանակներում դա բացառվում է: Սակայն չկարողացա նրան համոզել: Աչքը տեսածից է վախենում. այսպես էլ չհամոզվեց, մինչև վերջ մնաց իր կարծիքին ու հրաժեշտ տվեց էս աշխարհին: Եթե մեր օրերում նա ողջ լիներ ու տեսներ վերջին տասը տարիների իրադարձությունները, ծայր առած նոր արյունահեղությունները, պիտի ասեր. տեսա՞ք: Այո՛, տեսանք, իմ սիրելի մայր, դու իրավացի էիր: Եղեռնը շարունակվեց: Նախաձեռնողներն եղան իրենց թուրքերին արյունակից համարող, նրանց պես պանթուրքիստական մոլուցքով ամլեցուն, մեր հարևան «եղբայր» ադրբեջանցիները: Դրանում համոզվեցինք, երբ տեղի ունեցավ Սուլդայիթի նախճիրը, որը համառորեն եղեռն չորակվեց, իսկ հանցագործներն անպատիժ մնացին: Այնուհետև դա շարունակվեց Կիրովաբադում, Խոջալուում, Շահումյանի, Գետաշենի, Մարտակերտի, Հադրութի շրջաններում: «Ալազաններից» ու «գրադներից» դաժանորեն ռմբակոծեցին Ստեփանակերտն ու շատ

գյուղեր: Այն, ինչ կատարվեց Բաքվում, նման է 1905թ. նույն քաղաքում, 1920թ. Շուշիում կատարվածներին, երբ վերջինում շուրջ 1000 հայերի տներ ավերվեցին, հրդեհվեցին: Ինչո՞ւ եք մոռացել: Չէ՞ որ դրանք հիշեցնում են այն, ինչը առավել մեծ մասշտաբներով տեղի ունեցավ 1915 թվականին և դրան հաջորդող մի քանի տարիների ընթացքում՝ Արևմտյան Հայաստանի ընդարձակ տարածքում գտնվող շատ քաղաքներում ու բնակավայրերում. նույն ձեռագիրը ակնհայտ է...

Էլիսան Սեփին, դուք, իբր, Լեռնային Ղարաբաղում հակամարտության խնդիրները լուծելու «ազնիվ» ցանկությանը մտահոգված, դեղամիջոցներ եք առաջարկում, բայց եկեք, ինչպես մեր ժողովուրդն է ասում, «ծուռ նստենք, շիտակ խոսենք», չմեղանչենք պատմության նկատմամբ, քանզի այն կեղծիք չի հանդուրժում: Ձեր ընդարձակ հողվածում դուք մոռացել եք անդրադառնալ հարևան Նախիջևանի ինքնավար հանրապետությանը, որը խորհրդային տարիներին լիովին հայաթափ արվեց: Չէ՞ որ Շարուրի դաշտը Արարատյան դաշտի շարունակությունն է և անցյալում Հայաստանի բաղկացուցիչ մասն էր կազմում: Վկա են «Նախիջևան» անունը (որը պահպանվել է, թեկուզ ադրբեջաներեն չի ստուգաբանվում), տարածքի թափուր արված հայկական գյուղերը, մեծ մասամբ ավերակված կամ կիսավեր բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձանները, բազմահազար քարակոթողներն ու խաչքարերը...

Դրանք քարակերտ են, բայց խոսում և ունեն իրենց ուրույն լեզուն և պատմելու կարողությունը: Ես պատմագետ չեմ, սակայն ի լրումն պատմագիտության դոկտոր Հրանտ Աբրահամյանի հողվածի, ցանկանում եմ ձեզ համար հանդես գալ թարգմանի դերում, որովհետև այդ հողատարածքների լեզուն ձեզ անծանոթ է: Հետևելով անփառունակ վերջ գտած Ջիա Բունիաթովի մերժված հակազիտական կարծիքին, դուք հայերի գոյությունը Լեռնային Ղարաբաղում կապում եք 1826-1828թթ.

Պարսկաստանից արտագաղթելու հետ: Բայց չէ՞ որ Լեռնային Ղարաբաղը հնուց հայերով բնակեցված տարածաշրջան է, իսկ տարածաշրջանը կոչվում էր «Արևելից կողմանց Հայաստան», կամ Արցախ: Դրա անժխտելի վկաները այդ լեռնաշխարհը զարդարող հայկական բազմահարյուր պատմաճարտարապետական հուշարձաններն են, որոնց մասին ցանկություն ունեն ձեզ իրազեկ դարձնել: Ամարասի վանքի եկեղեցու բեմի տակ է գտնվում 338թ.

նահատակված Գրիգորիս վարդապետի դամբարանը: Շինարար հայ ժողովրդի ջանքերով միջնադարում ստեղծված արցախյան հոյակերտներ՝ Գանձասարի, Դադիվանքի, Գոչավանքի, Խադրավանքի, Բռիեղցու և այլ համալիրներ (որոնց կառուցման ժամանակի մասին ունենք հավաստի վիճաբանական ու մատենագրական տվյալներ), միտումնավոր կերպով զոհ դարձնելով այսօրվա քաղաքական նկրտումներին, ադրբեջանցի որոշ վայ գիտնականներ ներկայացրին

«աղվանական» պիտակով (չիմանալով, որ դրանց կառուցման ժամանակներում աղվաններ վաղուց չկային): Իսկ Ադրբեջանի Հանրապետության մինիստրների խորհրդի որոշմամբ, հաստատվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում գտնվող շուրջ 30 հուշարձանից բաղկացած մի ցուցակ, որում հիշատակվածներից մեծ մասամբ թվարկվում են ուշ միջնադարով: Ճարտարապետության կեղծարար պատմաբան Դաուդ Ախունդովը հանդես եկավ մի աշխատությամբ՝ ապացուցելու համար, որ հայկական խաչքարերը (իր հորջորջմամբ՝ «խաչդաշները») սերվում են ադրբեջանական գերեզմանային քարակոթողներից: Իսկ Էլդուրան Ավալովը Շուշիի քաղաքաշինության զարգացմանը նվիրված իր ատենախոսությունում (լույս է տեսել առանձին գրքով), «մոռացել» է հիշատակել Հայկական թաղը, այնտեղի եկեղեցիները, հասարակական շենքերը, բնակելի թաղերը: Բավարարվել է միայն նշելով, որ Շուշիում բնակվում էին նաև «այլադավաններ»: Սակայն չէ՞ որ հայերի շնորհիվ Շուշին դարձավ Անդրկովկասի առևտրագործարարական քաղաքներից մեկը: Պատմության կեղծարարը իրավունք չունի պատմությամբ զբաղվելու, նա արժանի է դատապարտման: Ուրպես ճարտարապետական հուշարձանների պահպանության բնագավառի բազմամյա գործիչ, օրինական են համարում հարցնել. եթե Լեռնային Ղարաբաղի հուշարձանները հայկական չեն, այլ աղվանական են (պատկանում են իրենց նախնիներին), հապա ինչո՞ւ խորհրդային ժամանակներում տասնամյակներ շարունակ դրանք մնացել են անխնամ, նրանց պահպանության համար ոչ ջանք է գործադրվել, ոչ էլ միջոցներ են ծախսվել: Երբ Նախիջ՝անի ինքնավար հանրապետությունում սկսվեց «Արագ» (Արաքս) հիդրոհանգույցի շինարարությունը, լուր ստացանք, որ ապագա ջրամբարի տակ են մնալու հնագիտական և ճարտարապետական արժեքներ ներկայացնող հուշարձաններ, այդ թվում՝ հայկական: Չէին կազմակերպված, ինչպես նման դեպքերում պահանջվում է, հնագիտական պեղումներ ու ջրասույզ դառնալիք հուշարձանների փոխադրություն: Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախագահ Մարտիրոս Սարյանը (որի տեղակալն էի), մի նամակ ուղարկեց Ադրբեջանի նույնպիսի ընկերության նախագահ, ակադեմիկոս, կես հայ (մոր կողմից) Միքայել Հուսեյնովին: Ինչ որ ձեռնարկումներ կատարվեցին, սակայն արդյունքների մասին տեղեկություն չստացանք: Նույնպիսին եղավ 1970թ. Ադրբեջանի կոմկուսի կենտկոսի նորընտիր քարտուղար Հեյդար Ալիևի անունով ուղարկված նամակի ճակատագիրը: Նրանում նշված էր Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի տարածաշրջաններում գտնվող հայկական պատմաճարտարապետական հուշարձանների անմխիթար վիճակը, նրանց նկատմամբ խնամքի և հոգատարության

բացարձակ բացակայությունը: Խնդրվում էր միջոցներ ձեռք առնել պահպանության վիճակը բարելավելու և վերականգնման աշխատանքներ կազմակերպելու ուղղությամբ: Հետո տեղեկացանք, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում կազմակերպվել է Ադրբեջանի ընկերության մասնաճյուղ: Անդամավճարից գոյացած գումարները փոխանցվում էին Բաքու: Խիստ զայրացուցիչ էին Շուշիում մի քանի հայկական տների վերականգնման արդյունքները: Ինչպես ցույց տվեց դրանց հին ու նոր լուսանկարների համեմատությունը, ադրբեջանցի վերականգնողների ջանքերով այդ տները «ադրբեջանական ոճի» էին բերվել, այսինքն՝ կեղծարարության էին ենթարկվել: Վերադառնանք Լեռնային Ղարաբաղի հուշարձանների ազգային պատկանելիության հարցին: «Արևելյան կողմանց Հայաստանը» կամ պատմական Արցախը, որի կենտրոնական մասն է կազմում Լեռնային Ղարաբաղը, առատ է տարբեր ժամանակներում կառուցված բազմաբնույթ հուշարձաններով: Դրանք եկեղեցիներ են ու վանքային համալիրներ, անառիկ ամրոցներ են ու իշխանական ապարանք-ամարաթներ, կամուրջներ են ու արտադրական կառույցներ (հնձաններ, մառաններ, ջրաղացներ), ժողովրդական բնակելի տներ՝ գետնատների ուշագրավ նմուշներ: Այս բոլորը միասին արդյունք են Արցախ աշխարհի մշտաբնակ հայերի բազմադարյան շինարարական գործունեության: Արդյունքում՝ միջնադարյան Հայաստանի ճարտարապետության Սյունիքի, Վասպուրականի, Շիրակի և Գուլգարքի ճարտարապետական դպրոցներին զուգահեռ կազմավորվում է արցախյան դպրոցը: Այն իր զարգացման փուլերում սերտ կապեր է պահպանել կենտրոնական Հայաստանի ճարտարապետության հետ, հանդես բերել որոշակի ընդհանրություններ: Դրանք արտահայտվել են ավանդական քարատեսակների գործադրության հնարանքներում, կոնստրուկտիվ համակարգերում, կառուցված եկեղեցիների հատակագծային ու ծավալատարածական հորինվածքներում, համաչափական կանոններում, զարդարվեստի մոտիվներում և դրանց կիրառման սկզբունքներում: Եթե միջնադարյան հայ ճարտարապետությունը պատկերացնենք, որպես հաստաբուն մի կաղնի, ապա արցախյան դպրոցը դրա հզոր ճյուղերից մեկը կկազմի: Ահա թե ինչու գիտական հիմքից զուրկ է և վճռականապես մերժելի է ադրբեջանցի որոշ գիտնականների կողմից Արցախ աշխարհի հայկական ճարտարապետությունն իր ստեղծող ժողովրդից օտարացնելու միտումը: Վկայակոչեմ միայն մեկ օրինակ. Լեռնային Ղարաբաղի (նաև ընդհանրապես հայկական) գլուխգործոցներից մեկը Գանձասարի վանքային համալիրն է՝ Խաչենի իշխան Հասան Վալա-Դուլայի շինարարական գործունեության ու կառուցող ճարտարապետի ստեղծագործության փայլուն արդյունքը: Սուրբ Հովհաննես Մկրտիչ

Եկեղեցին կառուցվել է 1216-1238թթ. և օծվել 1240 թվականին: Օծմանը մասնակցած հայ պատմագիր Կիրակոս Գանձակեցին (որին ձերոնցից ոմանք ադրբեջանցի են ներկայացնում), հայտնում է. «շինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով գմբեթարդ երկնանման տաճար փառացն աստուծոյ ի վանքն, որ կոչի Գանձասար, հանդէպ Խոխոնա բերդոյ, ի տեղի շիրիմ իւրանց և հոլովմանս աշխատին ի նմա» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 269-270): Եկեղեցու կառուցման մասին հայերեն շինարարական արձանագրությունը փորագրված է տաճարի ներսում, հյուսիսային պատին. երկու հավաստի վկայագրություն: Իշխանի Հասան անվանասկիզբը ադրբեջանցի որոշ գիտնականներ փորձել են օգտագործել հօգուտ նրան հայ չհամարելուն: Անտեղյակ են, որ Վանանդի թագավորության հիմնադիրը եղել է Աբաս Բագրատունին, մրենցի մեծահարուստը Սահմադին անունն էր կրում և այլն: Սա ի միջի այլոց: Վերադառնանք Գանձասարի վանքի եկեղեցու և գավթի ճարտարապետությանը: Առաջինն իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով (ուղղանկյուն, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով) ու արտաքին պարագծային չափերով (11x17,4 մ) Հաղպատի վանքի սուրբ Նշան եկեղեցու կրկնակն է: Գանձասարինը տարբերվում է գմբեթի թմբուկի փառահեղ ձևերով ու վրայի քանդակային ուշագրավ դրվագներով: Նույնը կարելի է ասել 1261-ով թվագրված գավթի մասին: Այն իր հատակագծային հորինվածքով ու փոխադարձ հատվող կամարներով իրականացված ծածկի կոնստրուկտիվ համակարգով հար և նման է Հաղպատավանքի գավթին: Անշուշտ, դա ունեցել է իր պատճառը, որին այս հոդվածի սուղ պայմաններում հնարավոր չէ հանգամանորեն անդրադառնալ: Ադրբեջանցի մեր գործընկերներին խորհուրդ կտայի ծանոթանալ ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանի «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» հիմնարար մենագրությանը: Նրանում զետեղված են հայ ճարտարապետության Արցախի և մյուս դպրոցների բազմաթիվ զուգահեռների փաստեր: Անցյալում մի քանի անգամ առիթ են ունեցել լինել Լեռնային Ղարաբաղի «ինքնավար» մարզում: Ստեփանակերտում, Շուշիում, հայկական բոլոր գյուղերում ռադիոն օրնիբուն հնչեցնում էր ադրբեջանական հաղորդումներ ու երաժշտություն: Նույնպիսին էին հեռուստատեսային հաղորդումները: Ի պատասխան զարմանքիս, ասացին՝ «թողում չեն»: Մարզի հայ հավատացյալներին սպասարկող ոչ մի եկեղեցի չէր գործում: Այս մասին մեր լուսահոգի կաթողիկոս Վազգեն Ա-ի դիմումները մերժվեցին: Հազար ամոթ: Նույնիսկ արաբական կամ այլ տիրապետությունների ժամանակներում Հայաստանում և նրա անբաժան մասը կազմող Արցախում եկեղեցիներ են գործել: Մարզի

դռները փակ էին արցախահայության արյունակիցների, հայ մտավորականության, Հայաստանի դերասանական խմբերի, երգ ու պարի համույթների առջև: Այդ կապակցությամբ հանդիպումները Հեյդար Ալիևի դրածո, երիցս արգահատելի Կևորկովի հետ, վերջինիս կողմից որակվում էր որպես ազգայնամոլության դրսևորում: Հայ գիտնականներին արգելվեց շարունակել ԼՂԻՄ հուշարձաններից վիճաբանությունների հավաքման գործընթացը, հուշարձանների չափագրությունը: Խորհրդային ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղը ապօրինի միացվեց Ադրբեջանին, որի «հովանու» ներքո ղարաբաղահայերի նկատմամբ գործադրված հալածանքները պատճառ դարձան, որ ԼՂԻՄ-ին սպառնա Նախիջևանի հայերի ճակատագիրը: Մեծ թվով արցախահայեր, լքելով հարազատ օջախները, ցրվեցին աշխարհով մեկ, դրանով իսկ նպաստելով տարածաշրջանում ժողովրդագրական փոփոխությունը՝ հոգուտ ադրբեջանցիների... Տե՛ս մեր «Հաստաբուն կաղնու ճյուղերից մեծը» հոդվածը տպագրված «Գիտություն և տեխնիկա» հանդեսի 1989թ. 8-րդ համարում, էջ 1-5: Էլխան Մեհթիև, դուք վկայակոչում եք Լեռնային Ղարաբաղում հակամարտության կարգավորման հարցում աշխարհի 50-ից ավելի պետությունների դիրքորոշումը, ԵԱՀԿ-ի 1996թ. Լիսաբոնյան գազաթափողովի առաջարկած սկզբունքները, որոնցով իբր պիտի պահպանվի Հայաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, իսկ Լեռնային Ղարաբաղը մնալով Ադրբեջանի սահմաններում (իմա՝ տիրապետության տակ), իբր պիտի ապահովվի տեղական ինքնակառավարման ամենաբարձր կարգավիճակով: Նախ ասենք, որ այդ մեծ ու փոքր պետությունների ղեկավարները պարտավոր են խորանալ պատմության մեջ և ըստ դրա տվյալների իմացության մասնակցեն ծագած այս կամ այն վիճելի հարցերի կարգավորմանը և ոչ թե դրանք լուծեն իրենց երկրի շահերից (այդ թվում՝ նավթային): Մենք՝ հայերս, դառն հուշեր ունենք: Չէ՞ որ հենց այդ մեծ պետությունների աչքի առաջ ու իրենց լռելյայն հանդուրժողականությամբ, օսմանյան Թուրքիան քանիցս ոճրագործություններ կատարեց: Դրանք ավարտվեցին 1915 թվականին հայերի ցեղասպանությամբ ու Արևմտյան Հայաստանից միլիոնավոր հայերի տեղահանմամբ: Ես պատկանում եմ այդ սերնդին: Թուրքիան այդ ոճիրը մարսեց, հիմա էլ աջակից է դարձել իր արյունակիցներին, որպեսզի Նախիջևանից հետո հերթը հասնի Լեռնային Ղարաբաղին՝ պատմական Արցախին: Ահա թե ինչու, կարծում եմ, որ հակամարտության կարգավորման միակ ճշմարիտ լուծումը միջազգայնորեն ընդունված մյուս սկզբունքն է՝ ինքնորոշումը: Այլընտր անք չկա:

«Գիտություն», 1998թ., հոկտեմբեր

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐ

ՊԱՐՈՆ ՍՈՒԼԵՅՍԱՆ ԴԵՄԻՐԵԼԻՆ

Ձեր նախնիների կողմից 1915 թվականին շղթայազերծված ցեղասպանության հետևանքով այժմյան Թուրքիայի մասը կազմող պատմական Հայաստանի տարածքները հայաթափ դարձան: Դուք հիմա համառորեն ժխտում եք այդ տմարդի արարքը, մեղքը գցում այն տարիների Ձեր արյունակիցների վրա, կամ փորձում այլ և այլ կերպով պատճառաբանել 20-րդ դարի այդ մեծ ոճրագործությունը: Դեռ ողջ են այդ դաժան եղելությունների դժբախտ ականատեսները: Ես դրանց թվին եմ պատկանում: Այնուհետև եղեռնը շարունակվեց, այս անգամ արդեն Ձեր սերնդակիցների կողմից: Դրանց զոհ գնացին Թուրքիայի տարածքում անտերունջ մնացած հայոց քրիստոնեական հավատքի խորհրդանիշները՝ բազմահազար վանքերն ու եկեղեցիները, սրբավայրերը, խաչքարերը: Դրանցից մի քանիսը (Տեկորի տաճարը, Խծկոնքի վանակա անալիրը, Մշո Ս. Կարապետ և Առաքելոց վանքերը, Նարեկավանքը և այլն) պայթեցվել ու հողին են հավասարեցվել կամ այլ միջոցներով ավերումների են ենթարկվել. օրինակ՝ Անիի Սմբատյան պարիսպների, Հռոռոնոսի վանքի, Վարազավանքի, Բաղեշի Աստվածամոր և շատ ուրիշ հուշարձանների սրբատաշ քարերը տեղահանվել ու օգտագործվել են այլ նպատակների համար: Դրանցից մի քանիսին, ցավոք, անձամբ ականատես եմ եղել: Ավելին, ըստ վերջին տեղեկությունների՝ մզկիթի է վերածվել Կարս քաղաքի Առաքելոց մայր տաճարը, որպես հյուրանոց է օգտագործվում Կիպրոսի թուրքական մասում գտնվող հայկական Մակարավանքը: Դրանք էլ մեղադրում են դավաճանության մեջ, թե՞ դա հետապնդում է մեկ ծրագրային նպատակ՝ իսպառ ոչնչացնել հայերի երբեմնի ներկայության հետքերը: Բայց պատմությունը ջնջել հնարավոր չէ: Տասնամյակների ընթացքում Թուրքիայում գործադրված այդ վանդալությունները փաստագրված են բազմաթիվ ձևերով ու հրապարակումներով, դրանք հայտնի են քաղաքակիրթ ողջ աշխարհին:

Պարոն նախագահ, Թուրքիայում ավերված բազմաթիվ վանքերն ու եկեղեցիները, բացի հայոց հավատքի խորհրդանիշներ լինելուց, հայկական արվեստի ու ճարտարապետության մեծարժեք ստեղծագործություններ էին, մեր հանճարեղ նախնիների թողած հիշատակները: Դրանցից շատերը քաղաքակիրթ աշխարհի համընդհանուր ճանաչմանն ու բարձր գնահատանքին են արժանացել: Դրանց ոչնչացումը դատապարտվում է միջազգային օրենքներով: Դուք շարունակում եք անտեսել եվրոպական պառլամենտի 1987 թվականի որոշումը Թուրքիայի տարածքում ապրող ազգային

փոքրամասնությունների հավատքի հուշարձանների նկատմամբ խնամք ու հոգատարություն կազմակերպելու վերաբերյալ: Ձերոնց պարսավելի օրինակը որդեգրեցին Ձեր արյունակից մեր հարևանները: Նախիջևանն ամբողջովին դատարկվեց հայերից, բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր անտերունջ մնալով, ավերվում են: Հերթը հասել էր Ղարաբաղին...

Ձեռք-ձեռքի տված Ադրբեջանի հետ, շրջափակել եք ծայրահեղ ծանր պայմաններում հայտնված, ավերիչ երկրաշարժից մեծապես տուժած Հայաստանի Հանրապետությունը: Ձե՞ք կարծում, որ այդպիսի արարքներն անվայել են մի երկրի համար, որը ջանքեր է գործադրում անդամ դառնալու եվրոպական ընտանիքին. ժամանակը չէ՞, որ գոնե դույզն ինչ զղջաք անցյալում կատարվածների համար և կոնկրետ գործերով դա ապացուցեք: Հայ ժողովուրդը 2001 թվականին նշելու է քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Այդ կապակցությամբ Հայաստանում կազմակերպվում են նախապատրաստական կարգի տարբեր միջոցառումներ, նաև վանքերի և եկեղեցիների վերանորոգման աշխատանքներ: Կուզենայինք, որ թեկուզ ուշացած, նույնպիսի ջանքեր գործադրվեն Թուրքիայի տարածքում գտնվող հուշարձանների նկատմամբ: Վերջինները մեծապես տուժել են 1988թ. երկրաշարժից, առանձնապես Անիի Մայր տաճարը, որի կառուցման հազարամյակը լրանում է նույն 2001 թվականին: Պարոն նախագահ, դիմելով Ձեզ այդ մասին, կուզենայինք, որ Թուրքիայի կառավարությունը միջոցներ տրամադրի վերոհիշյալ հուշարձաններում վերականգնման ու նորոգման աշխատանքներ ձեռնարկելու համար, պայմանով, որ նախագծումն ու իրականացումը կատարվի Հայաստանի համապատասխան մասնագետների ու քարագործ վարպետների ներգրավմամբ: Դա անհրաժեշտ է, որպեսզի ապականատես չլինենք այնպիսի անցանկալի արդյունքի, ինչպիսին տեղի ունեցավ Անիի Սմբատյան պարիսպների երեսպատումները վերականգնելու կապակցությամբ: Կուզենք հավատալ, որ Ձեզ ուղղված այս դիմումը դրական արձագանք կգտնի: Քանի որ մեր պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ առայժմ չեն հաստատված, ուստի կատարելով հայկական հուշարձանների ճակատագրով բազում մտահոգների ցանկությունը, Ձեզ են դիմում ու ակնկալում Ձեր բարեհաճ կարգադրությունը:

«Ազգ», 1998թ., 24 նոյեմբերի

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՉԱՍՏԱՏՈՒՄ Է

Մեզ հասավ զայրացուցիչ լուրն այն մասին, որ հարևան Նախիջևանի ինքնավար հանրապետության տարածքում գտնվող պատմական Չին Ջուղայի գերեզմանատանը ավերումներ են կատարվում, խաչքարերը փոխադրվում, հայտնի չէ ուր... Արաքս գետի ձախափնյա մասում գտնվող հայկական այս գերեզմանատանը (XV-XVII դար), բազմահազար տապանաքարեր, խաչքարեր ու քանդակազարդ խոյեր կան՝ կերտված, տաղանդաշատ հայ վարպետների ձեռքերով: Չիրավի, Ջուղայի գերեզմանատունը պատմագեղարվեստական արժեքավոր կերտվածքների մի կատարյալ թանգարան է բաց երկնքի տակ: Սկզբում մենք չհավատացինք, որովհետև միջազգային օրենքներով դա ընդունվում է որպես բարբարոսություն հանդեպ պատմամշակութային հուշարձանների, իսկ մեղավորները ենթակա են խստագույն պատժի: Ցավոք, պարզվեց, որ ոճրագործությունն իրոք կատարվել է: Մեր հարևանները զուտ օրինակ են որդեգրել իրենց արյունակից թուրքերից, որոնք տասնամյակներ շարունակ բնաջնջել են Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող հազարավոր վանքեր ու եկեղեցիներ, կոթողային հուշարձաններ ու խաչքարեր, նպատակ հետապնդելով հայաթափ եղած տարածքներում իսպառ բնաջնջել գյավուրների (անհավատների), այսինքն՝ հայության հետքերը: Այդ բոլորը կատարվել է քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ: Գնահատման չի արժանացել նույնիսկ այնպիսի միջազգային կազմակերպության կողմից, ինչպիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ն է, որի անմիջական պարտականության մեջ է մտնում այդ կարգի հանցագործությունների սանձահարումը: Քանի որ թուրքերն ավերել են ու մարսել, ապա ինչո՞ւ նույնը չանեն նրանց արյունակից նախիջևանաբնակ ադրբեջանցիները, որոնք նույնպես հայաթափ դարձրին Նախիջևանը՝ հին հայկական տարածքը, իսկ հիմա ձեռնարկել են պատմամշակութային ու կրոնական հուշարձանների նողկալի «կոտորածը»: Կատարված բարբարոսության դեմ ձայն բարձրացրին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, տողերիս հեղինակը և ուրիշներ: Ի պատասխան՝ Բաքվի ղեկավար գործիչներից մեկը հանդես եկավ հայտարարությամբ, թե դա հայերի հերթական զրպարտանքն է և Նախիջևանի տարածքում հայկական հուշարձաններ չկան: Իհարկե, կարելի է երդվյալ ազգամուլ լինել, քողարկել կատարված հանցագործությունը, բայց պատմության հարցերում անգիտակ լինելը պատիվ չի բերում: Արդյոք փորձե՞լ է նա ադրբեջաներեն ստուգաբանել Նախիջևան անունը: Չե՞ որ դա հայերեն է և կապված է Նոյ նահապետի թափորի այդտեղ իջևանելու

ավետարանական պատմության հետ: Մի՞թե չգիտի, որ Նախիջևանի տարածքում բազմաթիվ հայկական վանքեր ու եկեղեցիներ և այլ նշանակության հուշարձաններ կան, որոնց վրա եղած բազմաթիվ ու բազմաբնույթ հայերեն արձանագրությունները մեր պատմական հիշողության լուռ վկաներն են և գիտական աշխարհին դրանք հայտնի են հրատարակված գրքերով, հիշատակված ճանապարհորդների կողմից և այլն: Պատմությունն անողոք է, կեղծիք չի հանդուրժում: Անձամբ ես՝ տողերիս հեղինակը դեռևս առաջին անգամ աշխարհամարտից հետո, երբ գլխավորում էի հնությունների պահպանության կոմիտեն, մի հանձնախմբի կազմում եղել եմ Ջուղայի գերեզմանատանը՝ այնտեղից հատուկ թույլտվությամբ մի քանի խաչքար էրմիտաժ՝ Հայաստանի պատմության թանգարան փոխադրելու կապակցությամբ: Բախտ ունեցա տեղում ծանոթանալ այդ բացառիկ հետաքրքիր բացօթյա թանգարանին: 1987թ. Իրանում եղած ժամանակ(մասնակցում էի Սուրբ Ստեփանոս-Նախավկա վանք կատարվող ուխտագնացությանը)Արաքս գետի աջ ափից տեսել ու լուսանկարել եմ Ջուղայի գերեզմանատունը: Այդ ժամանակ այն տակավին պահպանված էր: Իսկ այժմ, նույն ափից կատարված մեկ այլ լուսանկար, անվիճելիորեն բացահայտում է կատարված նողկալի բարբարոսությունը... Գերեզմանատան մի զգալի տարածք բուլդոզերներով «մաքրված» է, իսկ երկաթգծերին կանգնած են այդ «ավարը» փոխադրող գնացքի մի քանի վագոններ: Այնպես որ, ոչ մի զրպարտություն չկա, լուսանկարը դրա խոսուկ վկան է:

«Տեղեկագիր Հայաստանի շինարարների»,

Երևան, 1999թ.